

“Հայկական ատոմային էլեկտրակայան” ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը աշխատանքի պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

“ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը գիտակցում է իր պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության արդյունավետ պլանավորումը կազմակերպելու, անվտանգ արտադրություն իրականացնելու, սիստեմատիկ վերահսկում անցկացնելու և իր աշխատողների ու այլ շահագրգիռ կողմերի համար աշխատանքի համապատասխան պայմաններ ապահովելու համար:

“ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը հայտարարում է, որ աշխատանքի պաշտպանության բնագավառում իր հիմնական նպատակը հանդիսանում է ձեռնարկության աշխատողների առողջության պաշտպանությունը և աշխատանքի անվտանգ պայմանների ապահովումը:

Դրված նպատակին հասնելու համար և աշխատանքի պաշտպանության կանոնների ու նորմերի պահանջների համապատասխան “ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը, իրեն տրված լիազորությունների շրջանակներում, իրականացնում է գործունեություն՝ ուղղված.

-ՀՀ օրենսդրության, միջազգային ստանդարտների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի ներքին ու ճյուղային պահանջների անշեղ պահպանմանը,

-աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգ ստեղծելուն, ներդնելուն, աշխատունակ վիճակում պահպանելուն և անընդհատ բարելավելուն,

-աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգի ինտեգրմանը կազմակերպության՝ անվտանգության կառավարման ընդհանուր համակարգում,

-արտադրական տրավմատիզմի կանխմանը և պրոֆեսիոնալ հիվանդությունների բացառմանը,

-անձնակազմին՝ արտադրության և անվտանգության կուլտուրայի հիմունքների, ինչպես նաև աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի հարցերի ուսուցմանը,

-պաշտպանության անհատական և այլ անհրաժեշտ տեխնիկական միջոցների ապահովմանը,

-արտադրական ռիսկի գործոնների իդենտիֆիկացիային և ռիսկի վերաբերյալ ինֆորմացիայի հիման վրա որոշումների ընդունմանը,

-ԱԷԿ հաղորդակցման ուղիների, կառույցների, շենքերի, սարքավորումների, արտադրական պրոցեսների անվտանգության բարձրացմանը,

-աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմների օպտիմալացմանը,

-շահագործական ընթացակարգերում աշխատանքի անվտանգության հարցերի վերաբերյալ պահանջների պարտադիր հաշվի առնելուն և ապահովելուն,

-անձնակազմի աշխատանքային տեղերի կազմակերպմանը՝ սանիտարական նորմերի ու կանոնների պահանջների համապատասխան, ինչպես նաև նրանց ատեստավորման անցկացմանը՝ ըստ աշխատանքի պայմանների,

-սոցիալ-կենցաղային բարելավման ծրագրերի ներդրմանը,

-աշխատանքի անվտանգության վրա ազդող գործոնների (որոնց անհրաժեշտ է կառավարել/ մինիմումի հասցնել) ցուցակի կազմելուն և ժամանակին շտկելուն,

-յուրաքանչյուր աշխատանքային վայրում աշխատանքի պաշտպանության վիճակի սխտեմատիկ վերահսկողություն և պլանային ստուգումներ կազմակերպելուն,
-անձնակազմի առողջության և աշխատանքի պաշտպանության ցուցանիշների պարբերաբար վերլուծությանը և դրանց բարձրացնելու անհրաժեշտ միջոցառումների իրականացմանն ու ապահովմանը,

Ելնելով վերոհիշյալ միջոցառումներից մենք ակնկալում ենք, որ յուրաքանչյուր աշխատող, անկախ զբաղեցրած պաշտոնից, գիտակցում է անձնական պատասխանատվությունը արտադրական մեջ բոլոր դժբախտ դեպքերի և պատահարների համար, ինչպես նաև խստորեն կատարում է արտադրական առողջապահության, անվտանգ աշխատանքի նորմերի և կանոնների պահանջները:

Ընդ որում, մենք միշտ պատրաստ ենք օժանդակել աշխատողների նախաձեռնություններին, որոնք նպաստում են ձեռնարկությունում աշխատանքի կառավարման համակարգի կատարելագործմանը: